ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT
OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF
DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ ԼՄՍԱ/8247
«25» 02 2021թ.

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրեն
Է. Փոթոյանին
ք. Երևան, Աբովյան փ./23
էլ. հասցեն՝ mda.trade@yandex.ru
ՀՎՀՀ 02828767

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի միջև 17.08.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-9/28-4 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 30.09.2020թ. կնքված N1 Փոփոխության (այսուհետ՝ Փոփոխություն) համաձայն՝ վերջինս պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2020թ. 4-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել նեքոհիշյալ ցանկի ապրանքատեսակները նշված քանակներով՝

Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Մատակարարման ժամանակացույց՝ 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ	Չմատակարարված քանակ
Ացետիլցիստեին, acetylcysteine	հատ	60000	60000	37000
Լորնօքսիկամ lornoxicam	հատ	1200	1200	1200
Թիոկտաթթու, thioctic acid	հատ	3000	3000	3000

Հաշվի առնելով վերը նշված ցանկով նախատեսված քանակների մասով ապրանքների չմատակարարաման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը և 6.2 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.12.2020թ.-ին միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և Փոփոխությունը:

Տեղեկացնում ենք, որ «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն՝ պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել *128,246 (հարյուր քսանութ հազար երկու հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ*՝ որպես Պայմանագրով նախատեսված տույժ, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 և 900008000664 հաշվեհամարներին ենթակա են գանձման համապատասխանաբար *823,500 (ութ հարյուր քսաներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ*, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում և *8,235,000 (ութ միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ* դրամ որպես տուժանք՝ որակավորման ապահովում:

Ն. ՅՈԼՉՅԱՆ